ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/61 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «08» նոյեմբերի 2019թ.

2019թ-ի նոյեմբերի 7-8, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև ՀԱԱՀ հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/61 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Ստեփանյան	ՀԱԱՀ հիմնադրամի տնտեսական վարչության գլխավոր ինժեներ,
Ա. Քոչարյան	ՀԱԱՀ հիմնադրամի ավտոպարկի վարորդ չնորմավորված,
Գ. Հարությունյան	ՀԱԱՀ հիմնադրամի մատակարարման բաժնի պետ,
Է. Ադումյան	ՀԱԱՀ հիմնադրամի ավտոպարկի վարիչ,
Ռ. Մանասյան	ՀԱԱՀ հիմնադրամի մատակարարման բաժնի առաջատար մասնագետ,
Ե. Հարությունյան	ՀԱԱՀ հիմնադրամի գնումների մասնագետ.

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Ստեփանյանը, իսկ քարտուղարն էր՝ Ե. Հարությունյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/61 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/61 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ա. Ստեփանյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը:

Չ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Դիզելային վառելանյութ	3600000

ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/61 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ին, ժամը «12:00»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/61 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	«ՖԼԵԾ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ., շենք՝ 30, տարածք՝ 30	flashltdtender@gmail.com

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցը հայտը կազմել և ներկայացրել է ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/61 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան,
- Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,
- Մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի և զբաղեցրած տեղի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	**1**	«ՖԼԵՇ» ՍՊԸ	2800000	3360000

Որոշվեց՝

1. Ա. Ստեփանյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի առաջին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել «ՖԼԵՇ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում:

Կողմ՝ 5

Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ստեփանյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Քոչարյան _____

Գ. Հարությունյան _____

Է. Ադումյան _____

Ռ. Մանասյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ե. Հարությունյան _____